ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1570 21.08.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի օգոստոսի 14-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՁՊՎ և արձանագրվել էին հետևյալ թերությունները և խախտումները.

Թերություններ՝

1. Ընդհանուր սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և առկա էր տհաճ հոտ:
2. ՁՊՎ-ի վերջին երկու խցերը շատ խոնավ էին, որի պատճառով ուռած էին պատերը և փտել էր հատակը ամբողջությամբ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԻՑ
ՄՏԱՑ № 3953
26 08 2015

Խախտումներ՝

1. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել էր Արթուր Վանիկի Մելիքյանին գրավով ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունը և 02.04.2015թ-ին ժամը 16.00-ին Ա. Մելիքյանը ՁՊՎ-ից ազատ է արձակվել առանց քննիչի համապատասխան որոշման:
2. Սամվել Հակոբի Պետրոսյանը ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 20.05.2015թ-ին ժամը 15.00-ին և անհասկանալի պատճառներով ազատ է արձակվել 22.05.2015թ-ին ժամը 15.30-ին՝ հիմք ընդունելով անձին առավելագույն 72 ժամը պահելու փաստը, որին դեռ 24 ժամ կար: Դիտորդական խմբի համար անհասկանալի էր այն, որ 24 ժամ առաջ ազատ

5631
26 08

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

արձակված անձի ազատումը հիմնավորվել է անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետի հետ:

Միաժամանակ խնդրում ենք նշված անձի հետ կապված խորը ուսումնասիրության ենթարկել բերման ենթարկելու, ձերբակալելու և ազատ արձակելու արձանագրությունները, ինչպես նաև <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը:

3. Մուրադ Հարությունայնը բերման է ենթարկվել 16.01.2015թ-ին ժամը 16.30-ին, ձերբակալվել է ժամը 17.30-ին, ՁՊՎ է ընդունվել ժամը 18.30-ին: Նշենք, որ տվյալ ՁՊՎ-ում էլ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակում արգելանքի վերցնելու ժամը չի նշվում, նշված է ձերբակալման և ՁՊՎ ընդունելու ժամը: Հերթապահ մասի պետի բանավոր մեկնաբանությամբ ձերբակալման առավելագույն 72 ժամը ըստ իրենց հաշվարկվում է ոչ թե փաստացի ազատությունից զրկելու րոպեից, այլ ձերբակալման ժամից, որին բազմիցս Դիտորդական խումբը անդրադարձել է և Ձեր կողմից համապատասխան հանձնարարականներ էր տրվել:

Միաժամանակ ցանկանում ենք ավելացնել, որ Մ. Հարությունյանը խցից դուրս է բերվել և ընդհանուր իրավասության դատարան է տեղափոխվել խափանման միջոցի հարցը քննարկելու՝ արդեն իսկ 72 ժամը լրացած՝ 19.01.2015թ-ին ժամը 16.30-ին:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3119 << 22 >> 09 2015թ.

Ձեր 21.08.2015թ. թիվ 2621/1570 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ օգոստոսի 14-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Կոտայքի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Սանհանգույցը գտնվում է մաքուր վիճակում:
2. ՁՊՎ-ի 4-րդ և 5-րդ խցերի խոնավության, պատերի ուռածության և հատակի փտած լինեու կապակցությամբ 08.09.2015թ. գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Խախտումներ.

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի հատկանիշներով հետախուզվող Ա.Մելիքյանը, 01.04.2015թ. ժամը 06.40-ին բերման է ենթարկվել ոստիկանության Կոտայքի բաժին և տեղափոխվել ՁՊՎ: 02.04.2015թ. ժամը 16.00-ին Ա.Մելիքյանը ՁՊՎ-ից տեղափոխվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ բավարարվել է որպես խափանման միջոց գրավ կիրառելու միջնորդությունը: Գումարը վճարելուց անմիջապես հետո Ա.Մելիքյանը դատարանի վճռով դատարանի դահլիճից ազատ է արձակվել:
2. Մ.Հարությունյանը ոստիկանության Կոտայքի բաժին է բերման ենթարկվել 16.01.2015թ. ժամը 16.30-ին, ձերբակալվել է ժամը 17.30-ին և ՁՊՎ է ընդունվել ժամը 18.30-ին: Ըստ

ոստիկանության Կոտայքի բաժնի <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ Մ.Հարությունյանը դեռևս 72 ժամը չլրացած, 19.01.2015թ. ժամը 16.30-ին վարույթն իրականացնող մարմնի պահանջով տեղափոխվել է դատարան, որտեղ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ով նախատեսված <<ՁՊՎ-ում պահող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 7-րդ սյունակը պահանջում է նշել ձերբակալման ամսաթիվը և ժամանակը: Ոստիկանությունը ղեկավարվում է օրենսդրությամբ, այլ ոչ թե անձանց մեկնաբանությամբ, համաձայն ՀՀ.քր.դատ.օր-ի 130 հոդվածի պահանջի <<ձերբակալման առավելագույն 72 ժամը>> հաշվարկվում է անձին արգելանքի վերցնելու պահից:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ